ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 937-Ա

12 սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

# ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մեխակյան փողոցի թիվ 76 տան բնակիչ Համբարձում Ռազմիկի Խանազադյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /26.12.2011թ. տրված թիվ 2883045 սեփականության իրավունքի վկայական և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 05.09.2025թ. թիվ Կ-05092025-04-0209 որոշում / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 5/51 հասցեում գտնվող 0.00835հա մակերեսով հողամասից 0.0047հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 5/51 հասցեում գտնվող 0.00835հա մակերեսով հողամասից 0.0047հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 938-Ա

12 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

**ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՇՈՏ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Լերմոնտովի փողոցի թիվ 47 տան բնակիչ Աշոտ Արարատի Մանուկյանի դիմումը՝ պարզվել է, որ.

- համաձայն «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 30.03.2023թ. հաստատված 1534, 1535 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 18.08.2025թ. կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Լերմոնտովի փողոցի թիվ 47 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Աշոտ Արարատի Մանուկյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.05388 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություններ,
-բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.01692հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություն,
-բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Լերմոնտովի փողոցի թիվ 47 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել

օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.01692 հա մակերեսով հողամասը համարել Աշոտ Արարատի Մանուկյանի / ծնված՝ 15.07.1964թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 939Ա

«12» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի ԹԻՎ 875Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 26-ի «Գույքը օտարելու թույլտվություն տալու մասին» թիվ 875Ա որոշման 1-ին կետում «Տաթևիկ Մանվելի Խաչատրյանին /ծնված՝ 02.07.1987թ., անձնագիր՝ AV 0267256/» բառերից հետո լրացնել «Հակոբ Պետրոսի Գևորգյանին /ծնված՝ 08.05.1979թ., անձնագիր՝ AL 0245232/» բառերը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է Տաթևիկ Մանվելի Խաչատրյանին և Հակոբ Պետրոսի Գևորգյանին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 940Ա**

«12» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

**«ՏԻՏԱՆ-93» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և «ՏԻՏԱՆ-93» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2025 թվականի սեպտեմբեր 05-ի N 5776).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. «ՏԻՏԱՆ-93» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի սեպտեմբեր 11-ից մինչև հոկտեմբեր 30-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փ. 15 հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 317 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 941-Ա**

«12» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

**«ԱՄՊԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և «ԱՄՊԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2025 թվականի սեպտեմբեր 05-ի N 5755).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. «ԱՄՊԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի սեպտեմբեր 11-ից մինչև դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկ (Զոյա) փողոցի 7 հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 320 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 942-Ա**

«12» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

## «ՏԻՏԱՆ-93» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և «ՏԻՏԱՆ-93» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2025 թվականի սեպտեմբեր 05-ի N 5778).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. «ՏԻՏԱՆ-93» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի սեպտեմբեր 11-ից մինչև հոկտեմբեր 30-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փ. 15 հասցեում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 319 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ ___**

«13» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

**«ՏԻՏԱՆ-93» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և «ՏԻՏԱՆ-93» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2025 թվականի սեպտեմբեր 05-ի N 5778).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. «ՏԻՏԱՆ-93» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի սեպտեմբեր 11-ից մինչև հոկտեմբեր 30-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փ. 15 հասցեում ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 318 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ ծխախոտային արտադրատեսակների թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 944-Լ

«12» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

## ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, համայնքում շրջայցերի ժամանակ Արցախյան և 44-օրյա պատերազմներում զոհվածների հուշարձաններին ծաղիկներ խոնարհելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 45.0 հազ. դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 945Ա

12 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վարդան Մամիկոնյան փողոցի թիվ 16 տան բնակիչ Գայանե Վաչագանի Մարտիրոսյանի դիմումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0178-0005 կադաստրային ծածկագրով հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 27022018-04-0041 տրված՝ 27.02.2018թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011W3RF72P/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, 44 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 946-Ա

16 սեպտեմբերի 2025թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 20.06.2025թ. կազմված հատակագիծը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մ.Մաշտոցի փողոցի թիվ 42 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
2. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մ.Մաշտոցի փողոցի թիվ 42 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.0739հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 14-րդ գոտում:
3. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 947Ա

16 ապրիլի 2025թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏ» ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հայկ Նահապետի փողոցի թիվ 3 տան բնակիչ Հովհաննես Նշանի Գազազյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N12092019-04-0063, տրված՝ 12.09.2019թ. N12092019-04-0071, տրված՝ 12.09.2023թ./, իրեն և Ֆրիդա Նշանի Գազազյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N12092019-04-0070, տրված՝ 12.09.2019թ./, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Վաղարշապատ» ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագրեր՝ 04-002-0160-0006, 04-002-0160-0009, 04-002-0160-0008/, 2.1898հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու փոխադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Վաղարշապատ» ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագրեր՝ 04-002-0160-0006, 04-002-0160-0009, 04-002-0160-0008/,

2.1898հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք՝ վարելահող հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք՝ պտղատու այգի /կորիզավոր/ հողատեսքի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3482Ա

16 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

**ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՂՎԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԲԱՎԵՅԱՆԻ, ԼԵՆԱ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԲԱՎԵՅԱՆԻ ԵՎ ԳԱԳԻԿ ԼՅՈՎԱՅԻ ԲԱՎԵՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քննարկելով Գագիկ Լյովայի Բավեյանի լիազորված անձ Մնացական Կառլենի Սարգսյանի դիմումը՝ պարզվել է, որ.

- համաձայն 30.05.1990թ. տրված տեխնիկական անձնագիր, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 28.03.2025թ. հաստատված 1317 գրանցամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի և «Ջիվան Հարությունյան Արսենի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 09.06.2025թ. կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայիսյան փողոցի թիվ 77 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Աղվան Անուշավանի Բավեյանին, Լենա Անուշավանի Բավեյանին և Գագիկ Լյովայի Բավեյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.076 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություն,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0205հա սահմանազատված հողամաս,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայիսյան փողոցի թիվ 77 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային

նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունը և ավել օգտագործվող 0.0205 հա մակերեսով հողամասը համարել Աղվան Անուշավանի Բավեյանի /ծնված՝ 21.08.1955թ./, Լենա Անուշավանի Բավեյանի /ծնված՝ 25.07.1958թ./, և Գագիկ Լյովայի Բավեյանի /ծնված՝ 27.04.1972թ./, սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 949Ա

16 սեպտեմբերի 2025թ.

ք.Էջմիածին

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԱՂՎԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԲԱՎԵՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Աղվան Անուշավանի Բավեյանի լիազորված անձ Հրայր Մեսրոպի Հովհաննիսյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով Աղվան Անուշավանի Բավեյանին պատկանող /հիմք՝ 18.04.1990թ. տրված տեխնիկական անձնագիր և «Ջիվան Հարությունյան Արսենի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 09.06.2025թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայիսյան փողոցի թիվ 77 հասցեում գտնվող 0.045հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը, որի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել է մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դա չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայիսյան փողոցի թիվ 77 հասցեում գտնվող 0.045հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը համարել Աղվան Անուշավանի Բավեյանի /ծնված՝ 21.08.1955թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ  950-Ա

16 ապրիլի 2025թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Աղվան Անուշավանի Բավեյանի լիազորված անձ Հրաչյա Մեսրոպի Հովհաննիսյանի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայիսյան փողոցի թիվ 77 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ 18.04.1990թ. տրված տեխնիկական անձնագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011JYT3GTA / տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Մայիսյան փողոց, թիվ 77/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 951Ա

16 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.08.2025Թ. ԹԻՎ 882Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 28.08.2025թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը Աղվան Արզումանի Արզումանյանի սեփականությունը համարելու մասին» թիվ 882Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ հիմնական և եզրափակիչ մասերում նշված «0.03հա» բառի փոխարեն կարդալ «0.0299հա» բառը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТА
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 953Ա**

16 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.08.2025Թ. ԹԻՎ 883Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 28.08.2025թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունը և ավել օգտագործվող հողամասը Աղվան Արզումանի Արզումանյանի սեփականությունը համարելու մասին» թիվ 883Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ հիմնական և եզրափակիչ մասերում նշված «0.03հա» բառի փոխարեն կարդալ «0.0299հա» բառը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 953Ա

16 սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 12.08.2025Թ. ՏՐՎԱԾ ԹԻՎ ՇԹ/388/11579-25 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 37-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի, Ոսկեհատ գյուղի Բարեկամության փողոց թիվ 45 տան բնակիչ Նարեկ Հովհաննեսի Գասամանյանի դիմումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 12.08.2025թ. տրված թիվ ՇԹ/388/11579-25 շինարարության թույլտվությունը ճանաչել ուժը կորցրած:

2.Ապահովել սույն որոշման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը կառուցապատողին և ՀՀ Կադաստրի կոմիտեին՝ կառուցվող շինության նկատմամբ կառուցապատողի գրանցված իրավունքների դադարեցում գրանցելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարեկ Հովհաննեսի Գասամանյանի իրազեկվելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 954Ա

16 սեպտեմբեր 2025թ. ք. Էջմիածին

## ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 40 շենքի թիվ 43 բնակարանի բնակիչ Արման Գառնիկի Մկրտչյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 10.04.2025թ. տրված թիվ 10042025-04-0040 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Խ.Կարճիկյան փողոցի թիվ 3/1 հասցեում գտնվող բնակելի տանը կից համայնքային սեփականություն հանդիսացող 0.0159հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ օտարել որպես առանձին գույքային միավոր:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 09.09.2025թ. թիվ 99-Ա որոշումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Խ.Կարճիկյան փողոցի թիվ 3/1 հասցեում գտնվող բնակելի տանը կից համայնքային սեփականություն հանդիսացող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Խ.Կարճիկյան փողոցի թիվ 3/4 հասցեում գտնվող 0.0159հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Արման Գառնիկի Մկրտչյանին:
2. Արման Գառնիկի Մկրտչյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 706 247 /յոթ հարյուր վեց հազար երկու հարյուր քառասունյոթ / ՀՀ դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ Ու Մ Թ Ի Վ 953-Ա**

16 սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ 05.05.1994 ԹՎԱԿԱՆԻ N 11 ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան /Վ.Կոստանյան/ 8 շենքի 50 բնակարանի բնակչուհի Ռուզաննա Ավտանդիլի Մանուկյանի դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության պատգամավորների էջմիածնի քաղխորհրդի գործկոմի 05.05.1994 թվականի N 11 նիստում ընդունված Էջմիածին քաղաքի Լեոնիդ Ազգալդյան /Վ.Կոստանյան/ 8 շենքի 50 բնակարանը սեփականաշնորհելու վերաբերյալ ակտում կատարել փոփոխություն՝ ըստ բնակարանի սեփականաշնորհման հիմք հանդիսացած փաստաթղթերի ընտանիքի կազմում նշված «Մանուկյան Ռուզաննա Ավթանդիլի» և «Մանուկյան Ռազմիկ Ավթանդիլի» անունները համապատասխանաբար փոփոխել «Մանուկյան Ռուզաննա Ավտանդիլի» և «Մանուկյան Ռազմիկ Ավտանդիլի»:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Ռուզաննա Ավտանդիլի Մանուկյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**